Grant Thornton
An instinct for growth™

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ

2011թ. դեկտեմբերի 31

Grant Thornton

An instinct for growth™

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ.+374 10 260 964
Փ.+374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia
T +374 10 260 964
F +374 10 260 961
www.grantthornton.am

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ -ի բաժնետիրոջը

Մեր կողմից իրականացվել է «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի (Խումբ) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Grant Thornton
An instinct for growth™

Աուդիտորական աշխատանքները ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի և դուստր ընկերության՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

2012թ. ապրիլի 12

Գագիկ Գյուլբուդաղյան — Տնօրեն-բաժնետեր

Լիլիթ Արաբաջյան, FCCA — Առաքելության բաժնետեր

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	53,709,103	56,805,419
Ոչ նյութական ակտիվներ	5	8,995,664	6,676,834
Չապահովված փոխառություն կապակցված կողմին	6	14,671,335	13,146,098
Հետաձգված հարկային ակտիվներ	7	1,331,915	339,966
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		1,439,079	1,168,299
		80,147,096	78,136,616
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	3,303,858	2,934,720
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	12,700,287	14,959,272
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին		602,321	556,947
Ընթացիկ հարկային ակտիվներ		680,006	-
Մինչև մարման ժամկետը պահվող ավանդներ	10	7,600,838	8,984,064
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	1,802,456	1,335,912
		26,689,766	28,770,915
Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ	12	843,992	-
Ընդամենը ակտիվներ		107,680,854	106,907,531

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	13		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		72,116,565	59,360,485
		72,749,065	59,992,985
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ կապակցված կողմերից	14	-	26,885,218
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	15	285,823	294,233
		285,823	27,179,451
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ կապակցված կողմերից	14	22,873,543	12,257,125
Հետաձգված եկամուտ		2,018,847	1,872,093
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	9,753,576	5,260,440
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	345,437
		34,645,966	19,735,095
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		107,680,854	106,907,531

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012թ. ապրիլի 12-ին:

Ռալֆ Յիրիկյան
Գլխավոր տնօրեն

Վարդան Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական հասույթ	75,206,855	77,677,940
Գործառնական ծախսեր	(58,877,504)	(66,030,128)
Գործառնական գործունեությունից շահույթ	16,329,351	11,647,812
Ֆինանսական եկամուտ	1,917,946	1,224,955
Ֆինանսական ծախսեր	(1,505,609)	(2,354,572)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	(1,034,129)	6,033,001
Շահույթ մինչև հարկերը	15,707,559	16,551,196
Շահութահարկի գծով ծախս	(2,951,479)	(3,687,586)
Տարվա շահույթ	12,756,080	12,863,610
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	12,756,080	12,863,610

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	46,496,875	47,129,375
Տարվա շահույթ	-	-	12,863,610	12,863,610
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	12,863,610	12,863,610
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	59,360,485	59,992,985
Տարվա շահույթ	-	-	12,756,080	12,756,080
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	12,756,080	12,756,080
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	72,116,565	72,749,065

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	12,756,080	12,863,610
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	21,216,842	21,733,059
Հիմնական միջոցների օտարումից վնաս	8,443	18,780
Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկում	89,126	2,001,188
Պաշարների արժեզրկում	196,393	-
Տոկոսային ծախս	1,505,609	2,354,572
Շահութահարկի գծով ծախս	2,951,479	3,687,586
Տոկոսային եկամուտ	(1,917,946)	(1,224,955)
Շնորհներից եկամուտ	(71,942)	(40,223)
Ստացված ոչ դրամային ծառայություններ	-	522
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	1,034,129	(6,033,001)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	37,768,213	35,361,138
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	2,272,524	(3,181,477)
Պաշարների փոփոխություն	(540,699)	(1,036,986)
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(45,374)	(45,566)
Ոչ ընթացիկ պարտավորությունների փոփոխություն (ռոումինգի երաշխիքային կանխավճար)	(7,353)	11,257
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(1,521,968)	263,853
Հետաձգված եկամտի փոփոխություն	146,754	(181,097)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	38,072,097	31,191,122
Վճարված տոկոսներ	(6,445,156)	(452,142)
Վճարված շահութահարկ	(4,968,871)	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	26,658,070	30,738,980

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		(270,780)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(15,721,474)	(8,035,333)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		137,943	84,717
Մուտքեր/(ներդրումներ) կարճաժամկետ ավանդներում		409,550	(7,741,954)
Ստացված տոկոսային եկամուտ		1,225,682	532,393
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(14,219,079)	(15,160,177)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մարված փախառություններ		(13,269,766)	(24,789,420)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(13,269,766)	(24,789,420)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		(830,775)	(9,210,617)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(106,441)	177,708
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում		2,789,672	11,822,581
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	27	1,852,456	2,789,672

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: